Գաղափարների հավաքագրման առաջարկ

Հարգելի գյումրեցինե՛ր,

2020 թվականի հոկտեմբերից Գյումրի-Վանաձոր համայնքի ղեկավարները համատեղ ներկայացրեցին հայտ-նամակ՝ անդամակցելու Տեղային-ԲԿԳ նախաձեռնությանը: Նամակով հիմնավորեցին քաղաքների ձեռքբերումները և ներուժը ժողովրդավարական գործընթացների առումով և հեռահար տեսլականով:

Ապրիլին Գյումրու համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրվեց հայտարարություն-հրավեր՝ ՔՀԿ և այլ քաղաքացիների համար՝ միանալու Տեղային-ԲԿԳ աշխատանքային թիմին:

2021 թվականի մայիսի 27-ին Գյումրու համայնքապետարանում կայացավ շահագրգիռ թիմերի առաջին հանդիպումը: Հանդիպման մասնակիցները համաձայնեցին մեկամսյա ժամկետում հավաքագրել առաջարկություններ, որոնք կհամապատասխանեն ԲԿԳ սկզբունքներին (**թափանցիկություն, հաշվետվողականություն, մասնակցություն, նորարարություն**) և ուղղված կլինեն հետևյալ ուղղություններին՝

1. **Սոցիալ-տնտեսական ոլորտ**
2. **Տուրիզմի ոլորտ**
3. **Գնումների և բաց պայմանագրերի գործընթաց**
4. **Համայնքային գույքագրման գործընթաց**
5. **Համայնքային ծառայությունների պատվիրակման գործընթաց**
6. **Քաղաքային տրանսպորտի ոլորտ**
7. **Էկոլոգիական հարցերի ուղղություն**

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ առաջարկ ներկայացնողները կաշկանդված չեն ներկայացնելու վերոնշյալ ուղղություններից բացի այլ ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ:

Խնդրում ենք **մինչև սույն թվականի հունիսի 30-ը** առաջարկությունները ներկայացնել Տեղային-ԲԿԳ-Գյումրի նախաձեռնության կոնտակտային անձ Լևոն Բարսեղյանին՝ levon@asparez.am

Առաջարկը պետք է ներկայացնել հետևյալ ձևաչափով՝

Հանձնառության օրինակելի ձև

Առաջարկության անվանումը -	
Ո՞ր ուղղությունը, կամ ոլորտն է կարգավորում 1.Սոցիալ-տնտեսական ոլորտ 2.Տուրիզմի ոլորտ 3.Գնումների և բաց պայմանագրերի գործընթաց 4.Համայնքային գույքագրման գործընթաց 5.Համայնքային ծառայությունների պատվիրակման գործընթաց 6.Քաղաքային տրանսպորտի ոլորտ 7.Էկոլոգիական հարցերի ուղղություն 8.Նշել Ձեր առաջարկած ոլորտը, կամ ուղղությունը	
ԲԿԳ ո՞ր արժեքներին է համապատասխանում. Թափանցիկություն Հաշվետվողականություն Մասնակցություն Նորարարություն	
Կարգավորման ենթակախնդիրը և հիմնականնպատակը	